










Ջեռուցման համակարգի աշխատանքային գծագրերի հիմնական լրակազմի ամփոփագիր

Թերթ	Անվանում	Ծանոթագր.
1	Ընդհանուր տվյալներ	Զ-1
2	Հատակագիծ ջեռուցման համակարգի անցկացումով Մ 1:200	Զ-2
3	Կաթսաների տեղակայման աքսոնոմետրիկ սխեմա	Զ-3
4	Ջեռուցման համակարգի սխեմա	Զ-4
5	Ջեռուցման համակարգի մասնագիր	Զ-5

Պայմանական նշաններ

	Ջեռուցման մատակարարող խողովակագիծ
	Ջեռուցման հետադարձ խողովակագիծ
	Փական
	Դատարկման փական
d=20x2.8	խողովակի տրամագիծ
	Ջեռուցման տուրքո կաթսա
	Ջեռուցման պողպատե պանելային մարտկոց 50սմ×50սմ չափերով (հատակագծում)
	Ջեռուցման պողպատե պանելային մարտկոց կարգավորիչ փականով և օդահան կափույրով 50սմ ×50սմ չափերով (սխեմայում)
	Ջեռուցման կանգնակ № 1
	Անցում հատակի նախաշերտի միջով

ԸՆԴԻՊԱՆՈՒՐ ԳՈԼԳՈՒՄՆԵՐ

Լիճքի մանկապարտեզի ջեռուցման համակարգի նախագիծն իրականացված է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, նախագծման նորմերին և կանոններին (ՀՀՇՆ IV-12.02.01-04), ինչպես նաև նախագծային առաջադրանքին համապատասխան:

Նախագիծն իրականացված է ըստ արտաքին օդի հաշվարկային ջերմաստիճանի տարվա ցուրտ շրջանի համար $t_h = -19^{\circ}\text{C}$:

ՋԵՌՈՒԳՈՒՄ

1. Լիճքի համայնքային կենտրոնը ունեցել է ջերմամատակարարման ներքին ցանց՝ առանց ջերմային հանգույցի և զազամատակարարման: Գոյություն ունեցող ցանցում տեղադրված են եղել տարբեր չափերի ջեռուցման պանելային մարտկոցներ, իսկ մայրուղային խողովակագծերը հավաքակցված են եղել մետաղապլաստե խողովակներից: Նախագծի շրջանակներում ամբողջովին օգտագործվել են պանելային մարտկոցները, իսկ մետաղապլաստե խողովակագծերը ապամոնտաժվել են և փոխարինվել պոլիպրոպիլենային խողովակներով: Ապամոնտաժված բոլոր նյութերը և սարքավորումները, որոնք չեն օգտագործվում նախագծում, անհրաժեշտ է վերադարձնել և ի պահ տալ գյուղապետարանին:

2. Մանկապարտեզի համար նախագծվում է փակուղային ջեռուցման համակարգ: Մայրուղային խողովակագծերն անց են կացվում հատակի վրայով:

3. Զեռուցման ընդհանուր ծախսը կազմում է 92.3կվտ (79400կկալ/ժամ):

4. Նախագծով նախատեսվում է ջերմային հանգույցում տեղադրել երեք տուրբո կաթսա՝ յուրաքանչյուրը 35կՎտ հզորությամբ:

5. Որպես ջերմատար ծառայում է $80-60^{\circ}\text{C}$ ջերմաստիճանով տաք ջուրը:

6. Որպես ջեռուցման սարքեր ընդունված են պողպատե պանելային մարտկոցներ, որոնց համապատասխան կախիչները, պտուտակամեխերը, փակիչը և օդահան կափույրը ներառված են յորաքանչյուր կոմպլեկտում:

7. Ջեռուցման համակարգում բոլոր խողովակները նախատեսվում են պոլիպրոպիլենային:

8. Համակարգից օդի հեռացումն իրականացվում է ջեռուցման մարտկոցների վրա տեղադրված օդահան կափույրների միջոցով:

9. Որպես ելակետային ջուր օգտագործվում է խմելու ջուրը շենքի ներքին ջրամատակարարման ցանցից:

10. Խողովակաշարից ջրի հեռացումն իրականացվում է դատարկման փականներով դեպի 0.15x0.15x0.1(հ) չափերի գետնախորշը, որտեղից ջուրը հեռացվում է դեպի սալվածք: Գետնախորշը ծածկել 0.2x0.2 չափերի ակոսավոր մետաղական քիթերով ($\delta=2$ մմ):



11. Մայրուղային խողովակագծերը սյուների մոտ անց են կացվում ե/բ սյուները շրջանցելով:

12. Հատակի նախաշերտի միջով անցնող խողովակները ջերմամեկուսացվում են ձեռիմե ջերմամեկուսիչ խողովակներով:

13. Մայրուղային խողովակագծերը ծածկվում են փայտատաշեղային լամինացված սալերով:

14. Շահագործումից առաջ ջեռուցման համակարգը ենթարկվում է հիդրավլիկ փորձարկման:

15. Թողարկումից հետո կատարվում է ջեռուցման համակարգի կարգաբերում:

Ծրագրի առաջադրանք՝ TQG-02				Լիճքի համայնքի կենտրոնի վերակառուցում մանկապարտեզի տեղակայումով			
				Ջեռուցում	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
					ԱՆ	Ջ-1	5
				Ընդհանուր տվյալներ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎՐՈՍ ՍՊԸ 		
Նախագծ.	Հ. Ղուկասյան						
Պաշտոն	Ազգանուն	Ստորագր.					